

ՑՈՒՑԱՆՇԱՆԻՑ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻՆ ԱՆՑՈՒՄԸ ԼԵԶՎՈՒՄ

ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Լեզվական միավորների՝ հին աշխարհի քերականների ներկայացրած ենթակարգությունը (տառ, վանկ, բառ, բան) այժմ ընդունված հարացույցից (հնչույթ, ձևույթ, բառ, նախադասություն), եթե հաշվի չառնենք տարբեր տերմինների գործածությունը, ըստ էության մեկ սկզբունքային տարբերություն ունի. հին հույները խոսում էին վանկի մասին, XIX դարի վերջից նրա տեղը գրավում է ձևույթը: Բառի արտահայտության հատվածը՝ զուտ արտասանական միավորը, բառի իմաստալից բաղադրիչով փոխարինելու համար լեզվաբանությանը պետք եղավ ավելի քան երկու հազար տարի: Արմատները, ածանցները և թեքությունները, դրված լինելով պատմահամեմատական և տիպաբանական վերլուծությունների հիմքում, լեզվաբանության ուշադրության կիզակետում էին ամբողջ XIX դարի ընթացքում, և բնական էր այդ դարի վերջին դրանց միավորումը ընդհանուր անվանումով՝:

Հնչյունների գծային շղթայակցումը ծառայում է լեզվական միավորներից առաջին հերթին ձևույթի արտահայտության կազմավորմանը: Հնչյունը լեզվականորեն, առավել ևս հաղորդակցականորեն արժեքավորվում է ձևույթի կազմում, իսկ ձևույթային բովանդակությունից կտրված արտաբերվելիս համագոր է ձայնային վարժանքի² (կամ էլ ինքնանվանողական դեր է կատարում և դրանով իսկ ձևույթից էլ բարձր միավորի՝ բառի արժեք ունի): Հնչյունների կապակցումով կազմվող ձևույթը միայն իր արտահայտությամբ է նույնանում հնչյունակապակցության (նրա արտահայտության) հետ. «Տվյալ մակարդակի միավորը տարրալուծելով՝ մենք ստանում ենք ոչ թե ավելի ցածր մակարդակի միավորներ, այլ նույն միավորի ձևային հատվածները»³: Այն, որ հնչյունակապակցությունը դեռ ձևույթ չէ, կասկածից վեր է նաև այն պատճառով, որ այդ երկուսի միջև բովանդակային տարբերություն կա: Ձևույթը, ի տարբերություն բովանդակայնորեն միատարր, համասեռ

¹ Ст'ю И. А. Бодуэн де Куртене. Опыт теории фонетических альтернатив // И. А. Бодуэн де Куртене. Избранные труды по общему языкознанию. Т. 1, М., 1963, էջ 272:

² Սա ըստ էության տարրական պնդում է և որպես այդպիսին թերևս ապացուցման կարիք չի գգում, բայց այդ տարրական պնդման տարրական ապացույց կարող է լինել այն փաստը, որ որևէ լեզվում որևէ հնչյունի առկայությունը որոշվում է ոչ թե տվյալ լեզվով խոսողների՝ տվյալ հնչյունն արտաբերելու կարողությամբ, այլ այդ լեզվում այդ հնչյունը պարունակող ձևույթների գոյությամբ:

³ Бенвенист Э. Общая лингвистика. М., 1974, с. 134.

հնչյունի⁴ կամ նաև հնչյունակապակցության, բովանդակության արդեն իրարից տարբերվող (և, իհարկե, ինչ-որ բանով էլ իրար նմանվող) երկու շերտ ունի:

Հնչյունի կամ հնչյունակապակցության արտահայտություն ունենալով՝ ձևույթը, բնականաբար, ունի նաև այդ հնչյունի կամ հնչյունակապակցության բովանդակությունը: Մա ձևույթի ներլեզվական (բաղադրիչների բովանդակություններից բխող և նրանց հիման վրա որոշվող) նշանակությունն է: Բայց այն ձևույթի ողջ բովանդակությունը չի ընդգրկում, չի գրավում բովանդակության ողջ թատերաբեմը: Ձևույթի հնչյունական նշանակությամբ որոշվում է ձևույթի ընդհանուր բովանդակային ուղղվածությունը, որը որոշակի բովանդակություն է դառնում նրա վերաբերական նշանակության մեջ: Այստեղ արդեն չկա հնչյունների և ձևույթի այնպիսի համարժեքություն, ինչպիսին գոյություն ունի արտահայտության մեջ, և որակական անցում, թռիչք է կատարվում հնչյունական բովանդակությունից ձևույթայինին: Ձևույթի բովանդակության մեջ որոշիչը վերաբերական նշանակությունն է. ձևույթի գոյությունը և գործառույթները նրանով են պայմանավորված: Ձևույթի վերաբերական նշանակության ակունքներն արտալեզվական են. այն արդեն արտալեզվական իրականության արտացոլումն է: Այնուամենայնիվ, ներլեզվական հնչյունական նշանակությունը չի ջնջվում արտալեզվական իրականության վերաբերական ներհոսքով, այլ միայն ենթակա, ուղեկցող, խորքայնացված է դառնում: Ձևույթի բովանդակությունը միայն վերաբերական նշանակությամբ սահմանափակելն է հիմք դառնում ձևույթը որպես լեզվի առհասարակ նվազագույն իմաստակիր միավոր (նվազագույն լեզվական նշան) որակելու համար. անհամեմատ ճշգրիտ ձևակերպում է տալիս Գ. Ղափանցյանը, ըստ որի՝ ձևույթը նվազագույն միավորն է իր «նշանակողական» դերով⁵, այսինքն՝ որևէ իրողության նշանակում լինելով, իսկ դրա հետևանքով էլ ձևույթը դառնում է նվազագույն լեզվական միավոր իր բովանդակության մեջ լեզվականն ու արտալեզվականը համատեղելու առումով:

Հնչյունի ինքնակենսոթոնացածությունից հետո ձևույթի վերաբերական նշանակության մեջ առաջին անգամ փորձ է արվում ընկալելու և ընկալման մեջ աշխարհին վերադարձնելու արտալեզվական իրականությունը: Առաջինը լինելով՝ դա դեռևս փոքր-ինչ անվստահ ու անվարժ փորձ է, դեպի արտաքին աշխարհը բացվող մի փոքրիկ պատուհան, որով ձևույթը լեզու է բերում իր գերած (կամ իրեն գերած) արտալեզվական իրականությունից ինչ-որ բան: Արտալեզվական իրականությունը սկսում է մուտք գործել լեզու որպես գաղափարների նուրբ

⁴ Այստեղ հիշատակվող հնչյունական բովանդակության և հնչյունի նշանային բնութագրի հիմնավորումները մանրամասն տե՛ս **Ա. Ս. Աբրահամյան**, Հնչյունը որպես լեզվական միավոր // «Բանբեր Երևանի համալսարանի», 1999, №2, էջ 86-98:

⁵ Տե՛ս **Գ. Ղափանցյան**, Ընդհանուր լեզվաբանություն, հ. I, Եր., 1939, էջ 39-40:

հյուսվածք: Ձևույթը ոչ թե իրերն է ձգտում լեզվականացնել, այլ գաղափարները, բայց դա էլ առայժմ՝ բառին չհասած, հաջողվում է ոչ վերջնականորեն: Գաղափարը խոյս է տալիս՝ թողնելով իր հետքը, որով հետո բառը պիտի գտնի նրան. այն ինչ-որ տպավորություն է թողնում մտքի վրա, և միտքը ձևույթով նշանակում է այդ տպավորությունը՝ որպես գաղափարի ու այդ գաղափարը մարմնացնող իրողության հատկանիշ: Ձևույթով նշանակվող հատկանիշն օբյեկտին վերագրվող, օբյեկտի մեջ ներդրվող հատկանիշ չէ, որովհետև նրա որոշման մղումը ինքը օբյեկտն է տալիս: Դա օբյեկտի մեջ առանձնացվող հատկանիշ է, որը, սակայն, առանձնացվելով անվանում տվող սուբյեկտի կողմից, արդեն օբյեկտի գուտ օբյեկտային ինքնակա հատկությունն է, այլ միշտ ուղղված է դեպի սուբյեկտը, տրված է սուբյեկտի ընկալման մեջ⁶. այդպես (լեզվականորեն՝ ձևույթի մեջ և ձևույթի շնորհիվ) Կանտի մեկուսացրած երկու էությունների հաշտեցման հիմք է ուրվագծվում:

Անվանման հիմունքը իրողության հատկանիշների մեջ են որոնել դեռ հին աշխարհի լեզվափիլիսոփաները, որոնք, սակայն, սահմանափակվել են բառիմաստի հետ բառի հնչյունային կազմում եղած հնչյուններից ընդամենը մեկը կապելով: Միայն Յ. Գ. Հերդերից և հատկապես Վ. ֆոն Հումբոլդտից սկսած՝ անվանման համար ընտրված հատկանիշների բացահայտումը մեկնաբանվել է՝ ելնելով բառի իմաստալից բաղադրիչներից⁷. այդ պնդումը շատերն են կրկնում, բայց չգիտես ինչու, չեն անում տրամաբանորեն հաջորդ քայլը. բոլորը համերաշխորեն լռում են այն մասին, որ այդ հատկանիշները նշանակվում են բառի բաղադրիչ ձևայիններով: Մինչդեռ այլ կերպ լինել չի կարող. դա միանգամայն բացահայտ է դառնում հատկանիշի հիման վրա անվանում տալու և բառի՝ ձևայիններից կազմված լինելու դրույթների անգամ պարզ գուցակցումից:

Այն դեպքում, երբ արտալեզվական իրողությունն առարկայական գոյացություն է, ձևույթը նշանակում է նրա հատկանիշը: Իսկ երբ արտալեզվական իրողությունն առարկայի հատկանիշ է (տվյալ առարկայի հատկություն կամ ուրիշ առարկաների հետ հարաբերություն), ձևույթը նշանակում է լեզվական սուբյեկտի վրա նրա գործած տպավորությունը: Երկու դեպքում էլ ձևույթում արտացոլվում է այն հատկանիշը, որը սուբյեկտի ընկալման մեջ բնորոշում է օբյեկտը: Իրողության հատկանիշ նշանակող ձևույթն այն հողն է, որի մեջ իրողությունն ան-

⁶ Հմտ. «Կապող օղակ այստեղ կարող է լինել միայն զգացումը, որն ուղեկցում է ընկալումը... Ձգացումով և հնչյունով՝ միասին վերցրած (որովհետև առանց հնչյունի նկատված չէր լինի նաև զգացումը), մարդը նշանակում էր դրսից ստացված ընկալումը» (Потебня А. А. Мысль и язык // Потебня А. А. Эстетика и поэтика. М., 1976, с. 115):

⁷ St u J. G. Herder. Über den Ursprung der Sprache // J. G. Herder. Werke. Bd. 2. Berlin und Weimar, 1978, էջ 116-117, Гумбольдт В. фон. О различии строения человеческих языков и его влияния на духовное развитие человечества // Гумбольдт В. фон. Избранные труды по языкознанию. М., 1984, էջ 80, 103:

վանող բառի սերմն է գցվում: Անվանման հիմք դարձող հատկանիշի առանձնացումով լեզուն մի տեսակ նշույթավորում է օբյեկտը՝ նաև հետագայում նրան բառում տրվելիք անվան պատճառաբանման նպատակ հետապնդելով:

Չնայած ձևային բովանդակությունը և նրա արտահայտության հնչյունական նշանակությունը լիովին չեն նույնանում, այնուամենայնիվ հնչյունական նշանակությունը որոշ դեպքերում մեծ դեր է կատարում: Այդպես է հատկապես այն դեպքերում, երբ ձևային կազմում փոքր թվով հնչյուններ կան, և մեծանում է ամեն մի հնչյունի դերը ողջ կապակցության մեջ: Այսպես՝ այն ձևայինները, որոնց արտահայտությունը մեկ հնչյունով է կազմվում, սովորաբար բավականին ընդհանուր նշանակություն են ունենում, մեծ մասամբ հարաբերության կամ վերաբերմունքային իմաստ են արտահայտում: Այդ ձևայինների վերաբերական նշանակությունը, իհարկե, չի կարող նույնանալ այդ հնչյունների նշանակություններին, բայց նրանց ակնհայտորեն ոչ պատահական ընդհանրական հնչյունական նշանակության՝ կապակցության մեջ չորոշակիանալու հետևանք է: Կարելի է նկատել նաև հակառակ ուղղությամբ հաստատվող կախումը. առավել ընդհանուր բովանդակություն (հատկապես հարաբերական նշանակություն) ունեցող ձևայինների արտահայտությունը, որպես կանոն, ոչ մեծ թվով հնչյունների արտահայտություններից է բաղկանում: Ճիշտ է, այստեղ դեր է խաղում նաև այդ ձևայինների մեծ հաճախականությունից բխող խնայողության պահանջը, բայց իմաստային գործոնը ևս անկարևոր չէ:

Ձևային արտահայտության հնչյունային կառուցվածքի առկայությունն ակնհայտ է, բայց դրա կառուցման սկզբունքը կառուցակերպը, բացահայտ չէ: Հնչյունների մեծաթիվ կապակցություններ կարող են կազմվել: Պահինին հնչյունային գույակցումների արտածական հաշվարկումներ է կատարում և որքան էլ հետո արտաբերական և քերականական հիմունքներ ունեցող մակաձական սահմանափակումներով դրանցից առանձնացնում է թույլատրելի կապակցությունները⁸, այդպիսի հաշվարկումները սուկ հնարավորությունների շրջանակին կարող են վերաբերել, որը շատ ավելի լայն է, քան դրանց իրացումներինը: Հնչյունների արտաբերականորեն կամ լեզվագեղագիտորեն նույնիսկ ամենաընդունելի ոչ բոլոր կապակցություններն են օգտագործվում ձևային կազմելու համար. դրա կարիքը պարզապես չկա, որովհետև առանց դրա էլ ձևայինների քանակը, որը զգալիորեն գերազանցում է լեզվի ունեցած հնչյունների քանակը, բավարարում է լեզվի ձևային պահանջարկը: Այդ պատճառով էլ հնչյունների ընձեռած հնարավորություններից ընտրություն է կատարվում: Որևէ հնչյունակապակցություն ձևային արտահայտության կարգավիճակ ունի, եթե ժամանակին

⁸ См. у Амирова Т. А., Ольховиков Б. А., Рождественский Ю. В. Очерки по истории лингвистики. М., 1975, էջ 89:

լեզվաստեղծ ուժի հովանավորությամբ և աջակցությամբ արժանի է համարվել այդ պաշտոնը զբաղեցնելու: Հնչյունների կապակցումով կազմվող արտահայտություն ունեցող ձևույթը ոչ ձևային հնչյունա-կապակցություններից տարբերվում է արտահայտության բաղադրիչների ենթակարգվածությամբ, որը, չբացատրված մնալով էլ, ակնհայտորեն տարբերվում է պարզ շարակցումից⁹: Պետք է ենթադրել, որ ձևային կազմումը ենթարկվում է մի ինչ-որ բարդ և բազմահար օրինաչափության: Ձևային կազմելիս լեզուն հնչյունների հետ վարվում է հմուտ գորգագործի նման՝ հենքի մեջ ձգված բազմաթիվ թելերից ընտրված մի քանիսի միահյուսումով ստեղծելով անհրաժեշտ անկրկնելի պատկերումը: Արտահայտության կառուցակերպը ձևայինում ոչ թե սկզբունքորեն անբացատրելի է, այլ չբացատրված: Այս իրավիճակի համար առաջին հերթին մեղավոր է հնչյունական նշանակությունների ոչ բավարար ուսումնասիրվածությունը, որն էլ իր հերթին հաճախ պարզապես այդ անելու ցանկության բացակայության հետևանքն է: Իհարկե, եթե նույնիսկ հնչյունների նշանակությունները և կապակցություններում նրանց մասնավորումները հստակ բացահայտված լինեին, դարձյալ միայն դրանցով ձևային վերաբերական նշանակությունն ամբողջապես չէր բացատրվի. այդպես կպարզվեին միայն վերաբերական նշանակության հետ հնչյունային արտահայտության միակցման բովանդակային հիմքերը: Իսկ բուն վերաբերական նշանակությունը լեզվի մեջ ներբերվում է հենց ձևային մակարդակում. այն արտալեզվական իրականության առաջին ներկայացուցիչն է լեզվական բովանդակության մեջ և չունի իր նախորդը, որը նրա համար հենարանի դեր կկատարեր: Ձևային վերաբերական նշանակությունը, ի տարբերություն նրա արտահայտության, հնչյունային մակարդակի հիման վրա չի կազմվում: Հետևաբար այն տարրական վերաբերական նշանակություն է՝ անբաժանելի, կառուցվածքից զուրկ:

Այսպիսով՝ ձևայինում իրար են միանում անհատակ կառուցակերպով արտահայտությունը և լեզվական կառուցակերպ չունեցող բովանդակությունը, որոնք չեն կարող կապակցվել անմիջաբար, ինչպես հնչյունում: Ձևային տարակերպ արտահայտությունն ու բովանդակությունը միմյանց հետ կապվում են հնչյունային արտահայտության ներլեզվական նշանակության միջոցով, ներլեզվական և վերաբերական նշանակությունների միջև հարակցական հարաբերության հաստատմամբ: Ձևայինում արդեն առկա է լեզվում վերաբերական նշանա-

⁹ Ձևային իրենց կարգավիճակով տարբերվում են ոչ միայն ձևային արժեք չունեցող հնչյունակապակցությունները, այլև նրանք, որոնք կարող են ունենալ նաև ձևային գործառույթ: Այսպես ոչ միայն *պ-տ-է*, *տ-է-պ* և այլ «անիմաստ» հնչյունակապակցությունները հայերենի ձևայիններ չեն, այլև ձևային տարբեր է *պ-է-տ* հնչյունակապակցությունը, որը միայն լեզվում եղած ձևայիններից մեկի արտահայտությունն ունի, բայց ոչ նաև բովանդակությունը, ուստի ձևային չէ, այլ կարող է որպես ձևային հանդես գալ:

կության և արտահայտության համադրման օրինակելի կաղապարը՝ ներլեզվական նշանակության միջակա աստիճանով: Այդ ընդհանուր սկզբունքի ձևությամբ մասնավորման յուրահատկությունն այն է, որ ձևային ներլեզվական նշանակությունը հնչյունական նշանակություն է, այսինքն՝ արտահայտությունից է բխում և հետո միայն կապվում վերաբերական նշանակության հետ: Այդ, իհարկե, չի նշանակում, թե ձևային նախ կազմվում է, ապա՝ բովանդակություն ձևից բերում: Բայց եթե ձևայինից բարձր մակարդակների միավորներում նախ վերաբերական նշանակության հիման վրա կազմվում է ներլեզվական նշանակությունը (միշտ՝ այնպիսին, որին համապատասխան միավորներ կան նախորդ մակարդակում), իսկ հետո նրան արդեն միարժեքորեն կանխորոշված արտահայտություն է տրվում՝ նախորդ մակարդակի ընտրված միավորների արտահայտությունը, ապա ձևային վերաբերության բովանդակաստեղծ ազդակին զուգակցվում է հանդիպակաց ուժ. ընտրված հնչյուններն իրենց ներլեզվական նշանակություններով իրենց հնարավոր վերաբերությունների ոլորտն են որոշում, որն այս դեպքում շատ ավելի լայն է, քան ձևային վերաբերական նշանակությունը, և ոչ թե ենթարկվում է նրան, այլ արտաքին դրսևորում չստացող մի ներքին օրինաչափությամբ կապվում է նրա հետ:

Ձևային, այսպիսով, հնչյուն կամ որոշակի, բայց չմեկնաբանվող կառուցվածք ունեցող հնչյունակապակցություն է, որը նշանակում է արտալեզվական իրողության ընկալված հատկանիշը և նրա ընկալումից առաջացած տպավորությունը¹⁰:

Որպես արտահայտության և բովանդակության միջև բնականորեն չծագող, այլ հաստատվող, միջնորդավորված և ոչ ակնհայտ կապով կազմված նշաններ՝ ձևայինները Չ. Ս. Փիրսի տերմինի օգտագործումով կարող են բնութագրվել որպես լեզվական խորհրդանշաններ:

Խորհրդանշանայնությունը ձևային կազմավորմանը մասնակցող միակ նշանային հարաբերությունը չէ, այլ նրա կազմավորման ընթացքն ու վերջնական արդյունքը որոշողը, ամբողջացնողը, ձևային ինքնությունն արտահայտողը: Ձևային գուտ խորհրդանշան չէ: Որպես հնչյուն կամ հնչյունախումբ՝ այն նաև ցուցանշան է: Խորհրդանշանայնությունը վճռականորեն գերիշխում է ձևային, սակայն ցուցանշանայնությունը դրանով չի վերանում: Ձևային կրկնակի բովանդակությամբ

¹⁰ Այս երկուսի խորքային ընդհանրությունն առնվազն նմանաձայնական բառերի կապակցությամբ նշում են տարբեր ուսումնասիրողներ՝ Ավգուստինուսից (տե՛ս **Августин**. О диалектике // Вестник Русской христианской гуманитарной академии. Т. 17, Вып. 3. СПб., 2016, էջ 73-75) մինչև Շ. Դը Բրոս (տե՛ս **Донских О. А.** Происхождение языка как философская проблема. Новосибирск, 1984, էջ 68-69. հմտ., նաև՝ **Գ. Բ. Ջահուկյան**, Լեզվաբանության պատմություն, հ. I, Եր., 1960, էջ 235-236): Հեղինակներն այդպիսի ընդհանրացում-միավորումը հիմնավորում են այն պնդումով, որ երկու դեպքում էլ առկա է նմանություն. մի դեպքում՝ հոդաբաշխ և անհոդաբաշխ հնչյունների նմանություն, մյուս դեպքում՝ հնչյունների և առարկաների առաջացրած հոգեկան զգացողությունների նմանություն:

յուն ունի¹¹ և երկակի ձևով է արտահայտում այն՝ որպես ձևայթի վերաբերական նշանակություն և որպես նրա ներքնայնացված հարաբերակից՝ ձևայթի արտահայտությունը կազմող հնչյունների ներլեզվական նշանակություն: Ձևայթն արտալեզվական իրողության նշանակումը տալիս է իր բովանդակության երկու շերտերով՝ ներլեզվականով՝ որպես ցուցանշան և վերաբերականով՝ որպես խորհրդանշան: Այսպիսով՝ ձևայթն ավելի ճշգրիտ և մանրամասն բնութագրումով միաժամանակ և՛ ցուցանշան է, և՛ խորհրդանշան: Այն ցուցանշան-խորհրդանշան է, դրանում անցում է կատարվում ցուցանշանից խորհրդանշանին¹²: Դինամիկ կերպով իրար միացած երկու եզրերի համատեղումը ձևայթին ներքին մեծ ուժ է տալիս, նրան հաղորդում բազմազան երանգավորումների կարողություն, բառի թրթռուն կյանքի սաղմը դնում նրա մեջ և նրա այս կամ այն հայեցակետի առաջնաշման հնարավորության ստեղծումով մոտեցնում է նրան անուն դառնալու կամ կազմելու հեռանկարին:

Բանալի բառեր – ձևայթ, հնչյուն, խորհրդանշան, ցուցանշան, ներլեզվական նշանակություն, վերաբերական նշանակություն, հատկանիշ, կառուցվածք

АШОТ АБРААМЯН – Переход в языке от индекса к символу. – Из положений о том, что именование в слове совершается на основе признаков именуемого явления и что слово составляется из морфем, со всей очевидностью вытекает, что морфема и есть обозначение признака данного явления. Значение признака не исчерпывает всё содержание морфемы, а лишь является его первостепенным, важнейшим пластом, кроме которого существует и другой: несколько расплывчатое и всё же существующее фонетическое (звукосимволическое) значение звуков, входящих в состав морфемы. С точки зрения референциального (внеязыкового) значения морфема может быть характеризована как символ (по терминологии Ч. С. Пирса). Однако полная семиотическая характеристика морфемы должна учитывать также внутриязыковое значение, основанное на значениях её компонентов, и к символичности морфемы нужно добавить её индексальный аспект.

¹¹ Դ. Գյուլգասոյանը նույնպէս ձևայթի յուրահատկությունն է համարում նրա բովանդակության մեջ երկու շերտերի գուգակցումը՝ ճիշտ է, դրանք փոքր-ինչ այլ տեսանկյունից տարբերակելով: Նրա առանձնացրած շերտերն են բնական նշանակությունը և պայմանական իմաստը (տե՛ս **Դ. Գյուլգասոյան**, Նշանոլորտի սահմանը և բաղկացությունը. լեզվիմաստասիրական հայեցակերպ // Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ, Եր., 2015, էջ 32):

¹² Խորհրդանշանի մեջ ցուցանշանի առկայության մի հայեցակետ նշում է Չ. Ս. Փիրսը. «... Պիտի գոյություն ունենան նրա մասնավոր դեպքերը, ինչը Խորհրդանշանը նշանակում է... Խորհրդանշանն անուղղակիորեն, զուգորդման կամ այլ օրենքի միջոցով կցունվի այդ դեպքերի ազդեցության տակ, և այդպիսով Խորհրդանշանը կներառի յուրահատուկ Ցուցանշան» (**Չ. Ս. Փիրս**, Избранные философские произведения. М., 2000, с. 186): Ակնհայտ է, որ խորհրդանշանի ցուցանշան ներառելու մասին Չ. Ս. Փիրսը խոսում է նկատի ունենալով խորհրդանշանի կիրառությունների ցուցանշանային իմաստավորումը, ոչ թե ցուցանշանները որպէս բաղադրիչներ պարունակելը, ինչպէս արված է այստեղ:

Ключевые слова: морфема, звук, символ, индекс, внутриязыковое значение, референциальное значение, признак, структура

ASHOT ABRAHAMYAN – *Transition from Index to Symbol in Language.* –

The propositions that naming is performed on the basis of the properties of the named realia and that the word consists of morphemes, allow us to conclude that the morpheme is actually the designation of the given realia's property. The meaning of the property does not exhaust the content of the morpheme fully; it is rather its primary and most essential component, besides which there exists another one – a somewhat blurred and still existing phonetic meaning of sounds that are constituents of the morpheme. From the point of view of referential (extralinguistic) meaning the morpheme can be characterized as a symbol (according to Ch. S. Peirce's terminology). However, the full semiotic characteristics of the morpheme should also take into account the intralinguistic meaning, based on the meanings of its components, thus acknowledging not only the symbolic but also the index aspect of the morpheme.

Key words: *morpheme, sound, symbol, index, intralinguistic meaning, referential meaning, property, structure*